ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

ՀՏԴ 82-398
DOI: 10.56246/18294480-2025.18-21

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱ
ԵՊՀ և ԳՊՀ դասախոս,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլփոստ՝ arakelara1@gmail.com
ԲԱՏԻԿՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ
ԳՊՀ շրջանավարտ
էլփոստ՝ tem.batikyan@bk.ru

«Էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարան է ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև»
Հովհաննես Թումանյան

Հայ իրականության և մշակույթի մեջ «Սասնա ծռեր» ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է գրավում: Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի հեռավոր անկյուններից մեկում՝ Սասունում, որը Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառն է: Այս տարածքում են գտնվում հայտնի Մարաթուկ և Ծովասար լեռնագագաթները:

Սասունցիներն աչքի են ընկել հատուկ համառությամբ ու հայրենասիրությամբ:

«Սասնա ծռեր»-ը բարձրարվեստ ստեղծագործություն է: Էպոսում գործում են վիպական հերոսների չորս սերունդներ, որոնք միմյանց հետ կապված են ազգակցական կապերով՝ Սանասար և Բաղդասար, Մեծ Մհեր, Սասունցի Դավիթ և Փոքր Մհեր: «Սասնա ծռեր» էպոսը իսկական հանրագիտարան է հայ ժողովրդի ապրելակերպի, նիստուկացի, ընտանիքի, հավատալիքների կառուցողական և վերակառուցողական աշխատանքների մասին:

Հերոսավեպում բացահայտվում են ժողովրդի կառուցելու, ստեղծագործելու որակները:

Կառուցման և վերակառուցման թեմաները կարևոր տեղ ունեն «Սասնա ծռեր» հերոսական էպոսում: Տարբեր պատումներում այս թեման ունի և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ:

Սասնա պատումներում շինարարական թեման, առաջին, երկրորդ, մասամբ էլ չորրորդ ճյուղերի հիմնական թեմաներից է:

Սասնա վեց պատումներում Սասնա բերդի շինարարությունը կապված է Սանասարի անվան հետ: Սանասարը և Բաղդասարը դառնում են Սասնա տան հիմնադիրները:

Սասնա միայն մեկ պատումում Միհրի անվան հետ է կապվում եկեղեցաշինության թեման: Իսկ մյուս տիպաբանական խմբերի պատումներում Միհրի անվան հետ է կապվում Մարութա վանքի կառուցումը, Ծովասարում որսատեղի հիմնումը: Սասնա պատումների մեջ շինարարության թեմայի հետ կապված միջադեպերը վերագրում են Դավթին, ով կառուցում է գյուղ, քաղաք, մսուրներ, ախոռներ, շենքեր, պարիսպներ:

Փոքր Միհրի մասին խոսելիս պետք է նկատի ունենանք, որ նա հակասական բնավորություն ունի: Մի դեպքում կառուցող է, մեկ այլ դեպքում՝ քանդող: Նա քանդում է, քանի որ արդեն չի ընդունում եղած աշխարհակարգը:

Բանալի բառեր՝ *էպոս, գրականություն, պատում, գրական մշակում, ժանր, կառուցել, վերակառուցել, մոտիվ, տիպաբանություն, «Սասնա ծռեր», վիպասաց, համահավաք տեքստ:*

Մուտք

«Սասնա ծռեր» ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է գրավում հայ իրականության և մշակույթի մեջ: Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի հեռավոր անկյուններից մեկում՝ Սասունում:

Սասունցիներն աչքի են ընկել հատուկ համառությանբ ու հայրենասիրությամբ:

«Սասնա ծռեր» Էպոսում գործում են վիպական հերոսների չորս սերունդներ, որոնք միմյանց հետ կապված են ազգակցական կապերով՝ Սանասար և Բաղդասար, Մեծ Միհր, Սասունցի Դավիթ և Փոքր Միհր: «Սասնա ծռեր» էպոսը իսկական հանրագիտարան է հայ ժողովրդի ապրելակերպի, նիստուկացի, ընտանիքի, հավատալիքների կառուցողական և վերակառուցողական աշխատանքների մասին:

Հերոսավեպում բացահայտվում են ժողովրդի կառուցելու, ստեղծագործելու, որակները: Այն հիմնականում ձևավորվել է միջնադարում՝ արաբական արշավանքների ժամանակ՝ 8–10-րդ դարերում: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն

ժողովրդի անկախության, ազատության և պետականության պահպանման: Մեր էպոսում պետության և պետականության խորհրդանիշ է դառնում բերդը: Բերդի և հզոր պարսպների կառուցումով էլ Սանասարն ու Բաղդասարը սկիզբ են դնում Սասնա տոհմին և Սասնա տանը: Էպոսում ազգանվեր ու հայրենասիրական գործեր կատարում են թե՛ Սանասարն ու Բաղդասարը, թե՛ Մեծ Մհերը, թե՛ Սասունցի Դավիթը, և թե՛ Փոքր Մհերը: Հայրենիքում բերդերի, եկեղեցիների, վանքերի, կամուրջների կառուցումը դիտվում է որպես ռազմատնտեսական և կրոնաքաղաքական ինքնուրույն գոյության հենարաններ: Սանասարն ու Բաղդասարը կառուցում են Սասնա բերդն ու քաղաքը, Մեծ Մհերը հիմնում է Որսասարն ու Մարութա վանքը, երկիրը ծածկում բերդերով և կամուրջներով: Դավիթը նորոգում, վերակառուցում է հոր ավերված վանքը, հիմնում վանական միաբանություն, նորոգում Որսասարը: Փոքր Մհերն էլ է կապում կամուրջ:

Քննելով և ուսումնասիրելով էպոսի տարբերակների տիպաբանական խմբերը՝ նկատում ենք տարբեր եզրահանգումներ՝ մեր թեմայի հետ կապված:

Ուսումնասիրել ենք պատումներ Մոկաց, Սասնա, Մշո տիպաբանական խմբերից, ինչպես նաև համահավաք բնագիրը:

Առաջին ճյուղում Սասունում հաստատված Սանասարն ու Բաղդասարը սկսում են կառուցողական աշխատանքները, սակայն նրանք սկզբից ոչ թե իրենց բերդն են կառուցում, այլ կացարաններ են պատրաստում հասարակ աշխատավոր մարդկանց համար: Նրանք այդ քայլով բարձրացնում են իրենց մարդասիրական ոգին: ***«Առաջ շինենք զէդոնց ավահիք, Ու նոր շինենք զմեր բերդ. Էդ ֆուխարեք չըն կոնա: Արևուն առջև կենա: Ու սկսեցին զտներ»[1]:*** Գյուղացիների տները կառուցելուց հետո եղբայրները սկսում են հարմար տեղ գտնել, որ «բերդի հիմը» գցեն: Տարբեր պատումներում տարբեր կերպ է նկարագրվում բերդի կառուցման վայրը: Ըստ համահավաք բնագրի՝ իրենց բերդի հիմքը գցում են բարակ առվի ակունքում.

-Ով որ զէդա պստիկ ջրի ակըն գտնե
Ու զիր տունն էլ շինե վեր էդ ջրին,
Էնոր զավակն էլ որ ըլնի,
Էդպես զորեղ կըլնի,
-Հացն ու գինին.Տեր կենդանին[2],

Ինչպես տեսնում ենք, էպոսի դյուցազունների համար կարևոր է քրիստոնեական երդումը, որը գրեթե բոլոր ճյուղերում հանդիպում է՝ ***«Հացն ու***

---

[1] «Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, աշխատությամբ Ս. Հարությունյանի, «Սասունցի Դավիթ կամ Մհերի Դուռ», Երևան, 1977, էջ 14:

[2] Հայ ժող. հերոսավեպ «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ25:

գինին, տեր կենդանի», այսինքն հացը Հիսուս Քրիստոսի մարմինն է, իսկ գինին՝ նրա արյունը»[1]:

Մշո պատումներում եղբայրները վերջապես մի տեղ են հասնում և տեսնում են՝

Մե պարակ ճո'ւր վերուց կըկյա:
Կըկյա կիտ կըկտրի, մընչև կես կէրթա,
Ուր էն պարակ ճո'ւ'ր կըկտրի,[2]

Մշո պատումներում եղբայրները իրենց տան կամ բերդի հիմնման վայրը գտնում են՝ ***բարակ (***հատ. Բ, մաս Բ.***), պստրի (***հատ. Բ, մաս Բ***), ործ (***հատ. Բ, մաս Բ***), լուլե*** (պատում Ա) ջրի ակունքում:Պատումներից մի քանիսում գետի անունը հիշատակվում է՝ «***Մեղրագետի չայ»*** (հատ. Բ, էջ24), «***Մուրադ գետ»*** (հատ. Բ մաս Բ):

Մշո տիպաբանական խմբից հետաքրքիր է 1926թ. քյավառցի ***Հակոբ Նրգեյանից*** գրառված պատումը (հատ.Բ՝ Ժ), որտեղ պատմում է, որ երբ եղբայրները հասնում են «Մեղրագետի չայ» կոչված վայրը, (***ըստ Մանուկ Աբեղյանի Մեղրագետը նույն Ճապաղջուրն է կամ Քոդեն, որը Դավիթը իր «հոր մուլքն» է անվանում: Այն Եփրատի ձախ վտակն է)[3],*** նկատում են մի բարենպաստ վայր՝ բերդ կառուցելու համար. ***«Հետևը սար, դեմինը՝ տափարակ դաշտ և ջուրն ու օդը առողջարար»[4]:***

Ինչպես տեսնում ենք, էպոսում կարևոր է, թե որտեղ են հերոսները ընտրելու բերդի կառուցման վայրը: Հիմնականում նրանք ընտրում են լեռնային վայրերը, քանի որ լեռները ևս ունեն պաշտպանական նշանակություն:

Կարևոր է բերդի հիմքը գցելը: Վարպետներն սկսում են հողը փորել, երբ արդեն մթնում է, նրանք գնում են քաղաք մի պայմանով, որ առավոտ հավաքվեն և կիսատ գործը ավարտեն: Առավոտյան գալիս են նույն պատրաստվածությամբ աշխատելու նպատակով և զարմանում են, երբ տեսնում են, որ իրենց հիմքը լցվել և հավասարվել գետնին: Մտածում են, որ Աստծու կամքն էր, որ սա իսկական բերդի տեղը չէր.

---

[1] Տե՛ս Մատթեոս, ԻԶ, 27-29:

[2] «Սասնա ծռեր» հատ. Գ,պատումների գրառումները և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, 1979, էջ 27:

[3] Աբեղյան Մ. Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 337:

[4] « Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, հատ. Բ, մասն երկրորդ, խմբագրությամբ Մ. Աբեղյանի, աշխատակցությամբ՝ Կարապետ Մ.- Օհանջանյանի, Երևան, 1951 էջ 24:

-Գուցե մեր առջևը մի բարի բան կա, որ Աստված մեզ նորան կը պատահեցնե[1]:

Երբ նրանք բարձրանում են, եղբայրներից մեկը տեսնում է հին փլատակներ, որի վրա են ուզում կառուցել, բերդը և ոչ թե նորից, նոր հիմք գցել.

-Այստեղ դնել մեր բեռերը և սկսել գործը, որովհետև այստեղ հին շինվածք է եղել[2]:

Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ ներկա հերոսներն նախընտրել են հինը: Մարդիկ ապրել են այդ վայրում, և որպես ապացույց՝ մնացել են փլատակները:

Հերոսները՝ որպես անցյալի նվիրյալներ, այդ վայրն են ընտրում բերդի կառուցման համար:

Մեկ այլ պատումում եղբայրները բերդի հիմքը գցում են «***Վ՛ո՛րց***» ջրի ակունքում՝

Ե՛տեղ տեսան՝ պզտի մ՛են յանեն կի՛գա,
Ետ յեքա՛ ջ՛ո՛ջ ջուր կը կտրա, կ՛ընցնի մեկել յան,
Լա՛ո, ես պզտիկ ջուր Վ՛ո՛րց ջուր ա[3]:

«Որձ», այսինքն՝ ինչքան էլ բարակ, անուժ ջուր է երևում, սակայն նրա մեջ կա զորություն, հզորություն:

Այս պատումների մեջ առանձնանում է նաև ***1873թ. Տարոնցի Կրպոյից գրառված պատումը (պատ.Ա էջ11):*** Այստեղ եղբայրները գտնում են ջրի ակունքը, ջուրը ***«լուլե ջուր է»***: Այստեղ էլ կառուցում են իրենց բերդը՝

Էդ Աղբրի ջուր՝ լուլե մի ջուր է:
Կիգա, կը կտրե թըմամ զուր տըկու առուն[4]:

Այստեղ նկարագրվում են եղբայրների շինարարական կարողությունները նրանց ուժը՝ մեկը պատշար էր, մեկը՝ քար կրող, և այդպես օրը տասը տան հիմք են փորում, տասը տուն են սարքում, չորս օրվա մեջ քառասուն տուն են սարքում: Եվ երբ ավարտում են, սկսվում է բերդի անվանադրության պատմությունը:

Այս պատումում բերդի անունը դնում է Կապուտկողի թագավորը.

Քարե սան սուն եք զարկե,
Ըդրա անուն տեղնի Սասուն, Սասուն[5]:

---

[1] « Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, հատ. Բ, մասն երկրորդ, խմբագրությամբ Մ.Աբեղյանի, աշխատակցությամբ՝ Կարապետ Մ.- Օհանջանյանի, Երևան, 1951 էջ.24:

[2] Նույն տեղում:

[3] «Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, հատ. Բ, մասն երկրորդ, խմբագրությամբ Մ.Աբեղյանի, աշխատակցությամբ՝ Կարապետ Մ.- Օհանջանյանի, Երևան, 1951, էջ 657:

[4] «Սասնա ծռեր» Ժողովրդական վեպ, աշխ. Ս.Հարությունյանի, Երևան, 1977, էջ 11:

Կապուտկողը կամ Ընձաքիարս, կամ Ընձաքի սար գտնվում է Վանա լճի հարավային եզերքում՝ Ռշտունիքում: Կապուտկողի թագավորը, ըստ վեպի, հայ է, և նա է ապաստան տալիս եղբայրներին ու դնում բերդի անունը:

Մշո պատումների մեջ հետաքրքիր է 1973թ. Մարտունեցի Մելիք Գևորգյանից գրառված պատումը (հատ. Գ՝ ԺԱ): Նշված պատումում ասվում է, թե նրանք որոշում են, որ իրենց բերդի հիմքը գցեն այնտեղ, որտեղ շատ գազաններ, կենդանիներ և փարթամ բնություն կա: Գնացին շրջեցին Հայաստանի լեռներով և որոշեցին, որ «Անպայման էս լեռների, էս ապառաժների մեջ» (հատ. Գ՝ ԺԱ էջ 453):

Եղբայրները բերեցին քարեր և հենց այդտեղ էլ կառուցեցին իրենց բերդը:

Բոլոր տարբերակներում ասվում է, եթե եղբայրները բերդը կառուցեն նշված ջրերի ակունքում, ապա այդտեղ ծնվածները ավելի հզոր կլինեն.

Էս տեղի ծնվող էրեխեն,
Եթե էստեղ ծնվի, էս ջրուց խմա,
Մե մարդըն հարուր մարդու, դեմ կռիվ կէնա:
Ասեց.-Էստեղ մեզ տուն սուքենք[1]:

Եվ նրանք կառուցում են Սասնա բերդը, որը դառնում է դյուցազունների բնակավայրը:

Սասնա բերդը կառուցում են միջնամասում, իսկ տները՝ բերդի շրջակայքում, որը վկայում է նրանց միասնականությունը: Բերդի հարավ-արևելյան կողմում կար ***Քաղկիկ գյուղը***, վիպական Սասնա քաղաքը, ըստ Աբեղյանի՝ դա հենց այն գյուղն էր, որ սկզբից կառուցեցին Սանասարն ու Բաղդասարը գյուղացիների համար (***Աբեղյան, երկեր հատ. Ա, էջ 345***):

Եղբայրների համար հատուկ արարողակարգ է բերդի անվանադրումը:

Մշո պատումների մեծ մասում բերդն իր անվանումը ստանում է թագավորի կողմից, որն է՝ Սասուն (հ. Բ՝ Ա):

Ըստ Քյավառցի Հակոբ Նրգեյանի պատումի՝ հիմքը դնելու ժամանակ եղբայրները պատահում են երկու սյան՝ մեկը վրա էր դրված, մեկը՝ դրա տակ: ***Սուն սան վրա, -վոր է Սասուն[2]:***

Իսկ մեկ այլ պատումի համաձայն (1946թ. գրառված Սարալանջեցի Մկրտիչ Պետրոսյանից)՝ բերդի անունը հետևյալ կերպ է դրվել: Երբ ուզում էին

---

[5] «Սասնա ծռեր» Ժողովրդական վեպ, աշխ. Ս.Հարությունյանի, Երևան, 1977, էջ16:

[1] «Սասնա ծռեր» հատ. Գ, գրառեց՝ Հարությունյան Ս., «Թ» (պատումը պատմեց՝ մարտունեցի Հովհաննես Հակոբյան, գրառված 1973թ.), Երևան, 1979, էջ 349:

[2] « Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, հատ. Բ, մասն երկրորդ, խմբագրությամբ Մ.Աբեղյանի, աշխատակցությամբ՝ Կարապետ Մ.- Օհանջանյանի, Երևան, 1951 էջ 25:

ավարտել Բերդի կառուցումը, հանկարծ գերանը կոտրվեց, և Սանասարը «չոք»-ը դրեց տակը՝ մինչև բերեին գերանը, բայց բերված գերանը՝ որպես սյուն, կարճ էր, ուստի մեկ այլ սյուն էլ բերեցին, այսինքն՝ սյունը դրեցին սյան վրա՝

Ն՛ա՛գ՛ա՛սր՛ա՛ն տան մալարասի գերան կոտրավ:
Սինամ-Սարիմ ըսեց.
-Մե սուն բերեք, առնենք տակ:
Սուն բերեցին, առավ տակ,
Սունն կարճ եր, ուր չոք դրեց սան տակ[1]:

Այս պատումը հետաքրքիր էր նրանով, որ ժողովուրդն է ցանկացել դնել բերդի անունը: Առաջարկում են. «***Հաջի-Բաղր, Ղարանլուղ, Ապարան կամ Մուլքի» (հատ. Բ.),*** սակայն թագավորը գալիս և առաջարկում է դնել Սասուն, որն այս պարագայում ուներ իր բացատրությունը այսինքն՝ Սան Սուն, որն էլ դարձավ Սասուն (հատ. Բ.): Ըստ ***1903թ. քյավառցի Սարգիս Հակոբյանի*** պատումի՝ ասվում է, որ ***Հալեպի*** թագավորն է բերդի անունը դնում, այն է՝ ***«վըր սան սուն» կամ «սան- սուն» և քաղաքի անունը մնաց Սասուն:***

Մոկաց տիպաբանական խումբը սկսվում է ողորմիներով:

«Ողորմիների նման կառուցվածքը՝ հերոսներին ու նրանց հերթագայությունը, բնորոշ է այս ենթախմբին»[2]: Այստեղ եղբայրները գնում են «դպա խերական երկիր», այսինքն՝ Սասուն: Ջրի ակունքում են կառուցում իրենց տունը:

Ըստ 1912թ. Ապարանցի Բարսեղ Սահակյանի պատումի՝ եղբայրները հասնում են մի մեծ ջրի, որը մի բարակ ջուր կտրում-անցնում էր (հատ. Բ մաս. Բ պատ. ԺԷ): Այս պատումն առանձնանում է նրանով, որ եղբայրները ոչ թե հիմք են փորում, ինչը տեսնում ենք մյուս պատումներում, այլ քարեր են դնում իրար վրա և այդ ձևով գյուղ են շինում՝

Յես լե քարեր կը դնիմ իրար վրա,
Նշանգահ[3] շինեմ, որ գեղ շինենք:
Ոխտն որ իրար վրա Բաղդասար Նեճիր բերեց:
Սանասար նշանգահ շինեց[4]:

Այժմ անդրադառնանք **«Մեծ Միեր»** ճյուղին: Մեծ Միերը հիմնում է Որսասարը և կառուցում Մարութա վանքը: Այս ճյուղում ևս ներկայացված է կառուցելու մոտիվը: Երբ Մեծ Միերին ուզում են ամուսնացնել և գնում են

---

[1] « Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, հատ. Բ, մասն երկրորդ, խմբագրությամբ Մ.Աբեղյանի, աշխատակցությամբ՝ Կարապետ Մ.- Օհանջանյանի, Երևան, 1951, էջ 657:

[2] Համբարձումյան Հ. Սասնա ծռեր պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, 2018, էջ 62:

[3] Նշանգահ նշ. է նշան դրած տեղ:

[4] « Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, հատ. Բ, մասն երկրորդ, խմբագրությամբ՝ Մ.Աբեղյանի, աշխատակցությամբ՝ Կարապետ Մ.- Օհանջանյանի, Երևան, 1951, էջ 488:

Թևաթորոսի մոտ՝ Արմաղանի ձեռքը խնդրելու, բայց այդ ժամանակ Թևաթորոսը շրջում էր, և ոտնատակ էր տալիս երկիրը և ամենուրեք բերդեր կառուցում: Մանաձկերտ են գալիս խնամախոսները:

Ու հարցուցին, թե.- Թևաթորոս տա՞նն է,

Ասին. -Թևառորոս գնացեր է Վան:

Ագրատգահ գնացին Վան[1]:

Թևաթորոսի կյանքի մի օրվա մեջ, որ այստեղ նկարագրված է սրընթացությամբ, երևան է բերված նրա ողջ գործունեության բնույթը:

Մեջբերված դրվագում ներկայացվում է Թևաթորոսի հայտնվելը մե՛կ Վանում, մե՛կ Արզրումում, մե՛կ էլ Կարսում:

Այս թվարկումներով կարծես թե նշվում է հայկական ճարտարապետության աշխարհագրությունը, այստեղ հիշատակված են քաղաքներից ու նահանգներից մի քանիսը, որտեղ հայ ժողովուրդը ապրել է հնուց ի վեր և տաճարներ, բերդեր, տներ, կամուրջներ, ճանապարհներ կառուցել:

Այս նույն դրվագը ներկայացված է Ապարանցի Մուրադի պատումի մեջ

ևս,

Հարցուցին թե.–Թևա-Թորոս տո՞ւն ա:

Ըսեցին.-Թևա-Թորոս գացեր ա Վան:

Ագռատգահ գացին Վան[2]:

Մեծ Միերը կառուցում է Ծովասարը (Որսասարը), Սեղանասարը պարսպապատել է՝ որսի կենդանիներ բազմացնելու համար: Նույնիսկ որսը ձեռք է բերում, այսպես ասած, կուլտուրական գծեր[3]: Միերը այնտեղ մի մեծ «մախչա» է սարքում՝ մեջը ամեն մի Աստծո ստեղծած անասուններից բերում, հավաքում է, պարսպապատում և դարձնում է որսատեղ:

Էդ տեղի անուն դրեց Ծովասար[4]:

Ծովասարը գտնվում էր Առաքելոց վանքի մոտ, և մի փոքրիկ ծով ուներ իր գագաթին, և այստեղից էլ ստացել է իր անունը[5]:

Հաջորդը Մարութա վանքի կառուցումն է Մեծ Միերի կողմից, և նա էլ դնում է վանքի անունը: Ժողովրդի հավատքը այնքան մեծ է, որ վանքի շրջակայքի հողը օգտագործել են բուժական նպատակներով:

Մարութա անվանումը գալիս է արամերեն բառից, որը նշանակում է՝ իմ աշխարհի տերը[6]: Այս վանքը բոլոր Սասունցիներ համար առաջին և վերջին

---

[1] Հայ ժող. Հերոսավեպ, «Սասունցի Դավիթ» Երևան, 1981, էջ 10:

[2] «Սասնա ծռեր» ժող. վեպ, աշխատությամբ Ս.Հարությունյանի, Երևան, 1977, էջ 61:

[3] Եղիազարյան Ա. «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, 1999, էջ 201:

[4] Հայ ժող. հերոսավեպ «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 124:

[5] Աբեղյան Մ., Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 333 :

ամենահավաստի և ծանր երդմնարանն է: Ըստ վեպի՝ Մարաթուկ վանքը շատ հեռու չէ Ծովասարից և սովորաբար կոչվում է «Բանձրիկ Մարաթուկ» կամ «Սուրբ Բանձրիկ Մարաթուկ»: Մարութա վանքը էպոսի հերոսների համար դառնում է ամենակարևոր վայրը, և նրանք միշտ ապավինում են նրա զորությանը:

Ըստ համահավաք բնագրի՝ Մեծ Մհերը Ծովասարից քիչ հեռու կառուցում է մի գեղեցիկ վանք, բերում վարդապետներ և վանականներ: Նա Ծովասարի մոտ է կառուցում, քանի որ այն որսատեղ էր, ուստի Մհերը վանքը կառուցում է այդտեղ, որ Աստված հեռու պահի այդ վայրը թշնամիներից՝

Ծովասարեն երկու սահաթի չափ զատն
Գնաց խորոտ վանք մի շինեց,
Վանքի անուն դրեց Մարութա բարձր Աստվածածին[1]:

Սասնա միայն մեկ պատումում է Մհերի անվան հետ կապվում եկեղեցաշինության թեման: Մեծ Մհերը Սասնա Շեգոտան սարի գլխին կառուցում է Մարաթուկը, Կոնեբրիվ սարի գլխին՝ Աստվածածինը, մի վանք էլ՝ Դիարբեքիրում: Իսկ մյուս տիպաբանական խմբերի պատումներում Մհերի անվան հետ է կապվում Մարութա վանքի կառուցումը և Ծովասարի (որսասար) հիմնումը:

Հետաքրքիր պատում է 1939թ. վիպասաց Նունո Սահակյանից գրառված պատումը, որտեղ պատմվում է, որ Մեծ Մհերը Սասնա Շեգոտան սարի գլխին կառուցում է Սասնա բերդը և Մարաթուկը, իսկ Կոնեբրիվ սարի գլխին՝ Աստվածածին վանքը.

Առչին հաղ բերթըմ սուքեց Սասնա Շեգոտան սարի գլոխ,
Ընտեղ լե սուքեց Մարաթուկ:
Կոնեբրիվ պանցր սարու գլոխ լը սուքեց Աստվածածին[2]:

Մհերը շինարարական գործունեություն է ծավալում նաև Սասնո տարածքից դուրս՝ Դիարբեքիրում, որտեղ վանք է կառուցում ՝

Ըր Մհեր Սասնու բերթ, Աստվածածին սուքեց,
Ելավ գնաց Դիարբաքր,
Վանքըմ լե Դիարբաքր սուքեց[3]:

Այժմ անդրադառնանք **Դավթի** ճյուղին: Սասնա պատումների մեջ շինարարության թեմայի հետ կապված միջադեպերը վերագրում են Դավթին: Դավիթը կառուցում է գյուղ՝ Ճախրկան (հ. Զ,էջ 225), քաղաք՝ Քաղկիկ, ջրամբար

---

[6] Աբեղյան Մ., Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 333:

[1] Հայ ժող. հերոսավեպ, «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 124:

[2]«Սասնա ծռեր», հատոր Դ,Երևան, 1999, էջ 181:

[3] Նույն տեղում:

(հատոր Բ, էջ 127), ջրաղաց (հատոր Գ,էջ167), արհեստավորների համար շենքեր, պարիսպներ (հատոր Գ, էջ 167), ախոռներ, մսուրներ (հատոր Զ, էջ 224): Սասնա պատումներում Դավիթը իր հիմնարար և շինարար դերով առաջին և կարևոր վիպական հերոսն է համարվում:

Դավթի շինարարական գործունեության հետ է կապվում նաև արհեստագործության զարգացման գաղափարը: Ճախրկանում հիմնում է մանագործություն, մի այլ տեղ՝ կոշկակարություն, հացի փռեր (հատոր Գ, էջ 152), որոնցով ձրի հաց էին մատակարարում եկեղեցին կառուցող արհեստավորներին ու բանվորներին: Սասունը զարգացած արհեստների քաղաք չի համարվում, բայց առաջին անհրաժեշտության որոշ արհեստներ արտացոլված են վեպում:

Մնացած պատումներում Դավիթը վերակառուցում է հոր՝ Մեծ Միհերի կառուցած վանքը՝ Մարութա Բարձր Աստվածածինը, որը ավերել էր Մըսրա Մելիքը, վերանորոգում է Որսասարը և հիմնում է վանական համալիր:

Հետաքրքիր պատում է 1903թ. քյավառցի Սարգիս Հակոբյանից գրառված պատումը, որտեղ ասացողը պատմում է, որ պլեճկեր Դավիթը հասնում է բարձր սարի վրա, տեսնում է վանքը: Այստեղ վանքը ավերված չէ, այլ մի երկու քար է վանքի պատից ընկած, Դավիթը վերցնում է քարերը, իրենց տեղն է դնում և սկսում է աղոթել ոչ թե իր անձի համար, այլ իր ժողովրդի փրկության համար:

Մնացած բոլոր տիպաբանական խմբի պատումների մեջ երևում է Մսրա Մելիքի կողմից վանքի ավերված տեսքը,Դավթի երազը, որտեղ երևում է Մարութա վանքը, որը սրբատեղի է: Մնացած պատումներում Դավիթը վերակառուցում է ավերակները և վանքի մեջ հիմնում է վանական համալիր, ինչը զայրացնում է Մելիքին: Նա Կուզբադինին ուղարկում է Սասուն՝ վանքը ավերելու:

Այրարատցի Մուրադ Հովսեփյանի պատումի (հատ.Բ՝ ԺԳ) համաձայն՝ Դավթին երազ է գալիս, և նա ձեռնամուխ է լինում հոր ավերված վանքը վերակառուցելու:

1910թ. Դարկու Մոճկոնց գյուղացի Ավետիս Մարտիրոսյանից գրառված պատումը, որտեղ նույնպես պատմվում է Դավթի երազի մասին, թե ինչպես Դավթին ինչ-որ մեկը ասում է, որ Դավիթը պետք է այստեղ Մայր Աստծո հիշատակի համար վանք կառուցի: Այս պատումում երևում է Միհերի աստվածային էության բացահայտումը: Միհերի անունը կապվում է արևի աստծո անվան հետ և հանդիպում է բազմաթիվ ժողովուրդների մոտ[1]:

---

[1] Օրբելի Հ., «Հայկական հերոսական էպոսը», Երևան, 1956:

_ Դավի՛թ, յե՛լ, հոս Մայր Աստըծո հիշատակին համար վանք մը շինե, որե շինե, պատրաստե, ոծե, պատարագե: Ասավ այլևս հավիտյան քեզ բան չըլլար[1]:

Ուշագրավ է 1915թ. գրառված մի վանեցու պատումը (հատ.Բ՝ԺԸ), որտեղ Մարութա վանքը ներկայացված է հալվորի կերպարով, ով նստած է սարի վրա և կծկում է սպիտակ և սև կծիկներ: Դավիթը արձակում է հալևորի ձեռքերը, քեռի Թորոսը վկայում է, որ դա Մարութա Աստվածածինն է, ում ձեռքերը Մըսրա Մելիքն էր կապել: Ու Դավիթը որոշում է վերակառուցել հոր վանքը:

Այս պատումի մեջ կա նաև մեկ այլ աշխատանքի նկարագրություն, որտեղ Դավիթը վանական համալիր է հիմնում հենց Մարութա վանքում՝ բերելով քառասուն վարդապետ, քառասուն երեց, քառասուն տիրացու և քառասուն սարկավագ:

Տավիթ եկավ ու ժողվեց՝
Ք՚ա՚ռսուն վարթապետ[2],

Մեկ այլ՝ 1915թ. գրառված մշեցի Հարություն Դավթյանի պատումի (հ. Բ՝ Ի) համաձայն՝ Դավիթը մի անսովոր երազ է տեսնում կրակի տեսքով և հորեղբայրը ասում է, որ այդ կրակը Մարութա Բարձր Աստվածածնի նշանն է՝ իր հոր կառուցած վանքը: Դավիթը որոշում է հավաքել մարդկանց՝ վանքը վերակառուցելու համար:

Հորեղբայր, քեզնե կ՚ուզեմ,
Հավաքիս իրեք հարիր ուստա մարդիկ,
Երկուշաբթի վանք շինենք,
Շաբաթ որ մեջ պատարագ ենենք[3]:

Եվ այդպես էլ լինում է: Ձենով Օհանը հավաքում է մարդկանց: Երբ վերակառուցում են վանքը, Դավիթը որոշում է, որ պետք են վարդապետներ, երեցներ, քահանաներ՝ պատարագի արարողություն կատարելու համար:

Հավաքեց քառասուն վարդապետ, քառասուն տերտեր,
Հավաքեց տարավ վանքի մեջ դրավ[4]:

Երբ վերակառուցման լուրը հասնում է Մըսրա Մելիքին, վերջինս զորք է ուղարկում և նորից ավերում է վանքը, կոտորում բոլոր մարդկանց: Դավիթը նորից է վերակառուցում վանքը և վանական համալիրը:

Հալիձորցի Կազարյան Թառոյի պատումում (պ. Ժ) Դավիթը տեսնում է վանքի վրա ընկած լույսը և հասկանում, որ պետք է վերաշինել այն. «Էսա ըսկնա

---

[1] «Սասնա Ծռեր», հատոր Բ, Երևան, 1944, էջ 111:

[2] Նույն տեղում:

[3] «Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, հատ. Բ, մասն երկրորդ, խմբագրությամբ Մ. Աբեղյանի, աշխատակցությամբ՝ Կարապետ Մ.- Օհանջանյանի, Երևան, 1951, էջ 581:

[4] Նույն տեղում:

պիտի շինվի»: Դավիթը ձայնում է հորեղբայրներին և իմաց տալիս վանքի և Ծովասարի վրա ընկած լույսի մասին: Բոլորը համախմբվում են վանքը վերակառուցելու աշխատանքի շուրջ:

Հիսուն հատ էլ քար տվող,
Հիսուն հատ էլ ջուր կրող[1]:

Նորբայազետցի Թորգոմ Սարգսյանի (հատ.Գ. ԺԲ) պատումի մեջ Դավիթը բերում է հինգ հարյուր մարդ, և մեկ ամսվա մեջ շինում են Մարութա Ասվարածինը, և այն բնակեցնում հոգևորականներով.

Քառսուն տերտեր ա դնում,
Քառսուն եպիսկոպոս, քառսուն խատ տիրացու յա դնում մեջ:
Ասում ա. էս ձեր տեղն ա.
Ձեր փողն ըստացեք, ըստեղ էլ ապրեք[2]:

Սասնա հերոսներից վերջինի՝ Փոքր Միհրի կերպարն առանձնանում է մյուսներից: Փոքր Միհրը տարբերվում է և՛ ծնունդով, և՛ իր գործունեությամբ: Փոքր Միհրի բռի մեջ եղած մի պուտ արյունը որոշակիորեն ակնարկում է Միհրի զարմանալի արարքները, որոնք, դժբախտաբար իսկապես շատ են կապված արյան հետ[3]:

Փոքր Միհրը այնպիսի կերպար է, որին կարող ենք դիտարկել և՛ կառուցող, և՛ ավերող հերոս: Այսինքն՝ Փոքր Միհրը հանդես է գալիս երկակի կերպարով: Փոքր Միհրը կապում է կամուրջ, որը նույնպես կարող ենք դիտարկել որպես կառուցողական աշխատանք հերոսի կողմից:

1886թ. Աբեղյանի կողմից գրառված Մոկացի Նախո Քեռու պատումում ներկայացված է Փոքր Միհրի՝ կամուրջ կապելու գործընթացը, ինչպես է գետի վրա կամուրջ կապում, որ մարդիկ անցնեն, հետո բարկանում է, քանդում, հետո նորից է կառուցում՝

Ճուչ գետ ըմ Սասմա քաղաքի հեռջեվից կ՚երթեր.
Միհր ութ ըլից՝ կարմունջ կապեց վ՚ա՚ր են գետուն,
Վոր մարդիկ կ՚երթեն՝ վար կարմնջին ինի կ՚երթեն,
Միհր կ՚երթեր, մարդեր կը տփեր, կ՚ասեր.
- Շա՛ն վորդիք, յես կամունջ կապիր եմ,
Ծի՞ խամար եմ կապի.
Ընչո՞ւ վ՚ա՚ր իմ կարմնջին ինի կ՚երթեք[4]:

---

[1] «Սասնա ծռեր» ժող. վեպ, աշխատությամբ Սարգիս Հարությունյանի, Երևան, 1977, էջ 578:
[2] «Սասնա ծռեր» հատոր Գ, պատումների գրառ. և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի, Երևան, 1979, էջ 478:
[3] Եղիազարյան Ա. «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, 1999, էջ 176:
[4] «Սասնա ծռեր», հատոր Ա, երևան, 1936, էջ 42:

Եվ մարդիկ դառնում են հետ և անցնում են ջրի միջով, այս անգամ էլ Միերը բարկանում է, մարդկանց մեղադրում է, թե ինչու չեն անցնում իր կառուցած կամուրջով՝

Մարդիկ կը դառնան, գին:
Զարկին, ջրով ընցնին,
Միեր կ՚երթեր, կը տփեր, կ՚ասեր.
-Շա՛ն վորդիք, յես կամունջ կապիր եմ,
Ծի՛ խմար եմ կապի
Տ՚ո՚ւք ընչո՞ւ կը տեք ջրուն,
Ճ՚ու՚ր զձե տանի, մեղք ընկնի իմ վիզ[1]:

Միերի մասին խոսելիս, պետք է նկատի ունենանք, որ նա հակասական բնավորություն ունի: Մի դեպքում կառուցող է, մեկ այլ դեպքում՝ քանդող: Նա քանդում է, քանի որ արդեն չի ընդունում եղած աշխարհակարգը:

Այսպիսով՝ «Սասնա ծռերի»-ի մեջ կառուցման և վերակառուցման թեմաները կարևոր տեղ ունեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Սասունցի Դավիթ», Հայ ժող. հերոսավեպ, Երևան, «Լույս» հրատ.,1981:
2. «Սասնա ծռեր», հատոր Ա, խմբագր., Մ. Աբեղյանի, աշխ. Կարապետ Մ.-Օհանջանյանի, Երևան,«Հայպետհրատ.», 1936:
3. «Սասնա ծռեր», հատոր Բ, խմբագր., Մ. Աբեղյանի, աշխ. Կարապետ Մ.-Օհանջանյանի, Երևան, «Հայպետհրատ.», 1944:
4. «Սասնա ծռեր», հատոր Բ, մաս երկրորդ, խմբագր. Մ. Աբեղյանի, աշխ. Կարապետ Մ.-Օհանջանյանի, Երևան, «Հայպետհրատ.», 1951:
5. «Սասնա ծռեր», հատոր Գ,պատումների գրառ., Ս. Հարությունյանի, Արուսյակ Սահակյանի, Երևան, «Հայպետհրատ.», 1979:
6. «Սասնա ծռեր», հատոր Դ, պատումների գրառ., Ս. Հարությունյանի, Ա. Սահակյանի, Երևան, «Գիտություն» հրատ., 1999:
7. «Սասնա ծռեր», ժող., վեպ, աշխ., Ս. Հարությունյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977:
8. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, «Արևիկ» հրատ., 1989:
9. Աբեղյան Մ., Երկեր հատ. Ա, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ., 1966:

[1] «Սասնա ծռեր», հատոր Ա, երևան, 1936, էջ 42:

10. Եղիազարյան Ա., «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, «Գիտություն» հրատ., 1999:
11. Համբարձումյան Հ., «Սասնա ծռեր», պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, ԵՊՀ հրատ., 2018:
12. Սարգսյան Ա., «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ.,1975:
13. Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, «Հայկական ՍՍՌ ԳԱ» հրատ., Երևան, 1956:

CONSTRUCTION AND RECONSTRUCTION TOPICS IN "SASNA TSRER"

ARAKELYAN ARA
Doctor of Philology, Full Professor
Lecturer, Yerevan State University, Gavar State University
e-mail:_arakelara1@gmail.com
BATIKYAN TEHMINE
Graduate of the Master's degree in Armenian language and literature,
Faculty of Humantities, GSU
e-mail: tem.batikyan@bk.ru

"The epic is a magnificent treasury of the lived life and mental abilities of the Armenian race and is an undeniable testimony of its greatness before the world"
Hovhannes Tumanyan

The national epic "Sasna Tsrer" occupies a special place in Armenian reality and culture. It was born in one of the remote corners of the Armenian Highlands, in Sassoon, which is the tenth province of Aghdznik Province of Greater Armenia.

"Sasna Tsrer" is a work of high art. In the epic, there are four generations of novel heroes, who are connected to each other by family ties. Sanasar and Bagdasar, Great Mher, David of Sassoun and Little Mher. "Sasna Tsrer" epic is a real encyclopedia about the Armenian people's way of life, values, family, constructive and reconstructive works of beliefs.

The heroic novel highlights the people's constructive and creative qualities.

Themes of construction and reconstruction have an importand role in the heroic epic poem "Sasna Tsrer'. This theme has both similarities and differences in different versions.

In Sasna tales, the construction theme is one of the main themes of the first, second, and partly the fourth branches.

In the six Sasna version, the construction of the Sasna fortress is associated with the name of Sanasar.

Sanasar and Baghdasar become the founders of the home of Sassoun.

Only in one version of Sassoun, the theme of church building connects with the name of Mher. In other versions of typological groups, the construction of Maruta monastery and the establishment of Tsovasar hunting grounds connect with the name of Mher. In the Sasun tales, episodes related to construction are attributed to David, who builds villages, cities, stables, buildings and walls.

When speaking about Small Mher, we should recognize that he has a complex and controversial character. In one case he is a constructor, in another case he is a destroyer. He destroys, because he doesn't accept the existing world order.

Keywords: *epical poem, literature, version, literary development, genre, construction,* reconstruction, *motif, typology,'' Sasna Tsrer'', epic storyteller, collective text.*

ТЕМА СТРОИТЕЛЬСТВА И ВОССТАНОВЛЕНИЯ В ЭПОСЕ «САСНА ЦРЕР»

АРАКЕЛЯН АРА
Доктор филологических наук, профессор
Преподаватель ЕГУ и ГГУ
электронная почта: arakelara1@gmail.com
БАТИКЯН ТЕРМИНЕ
Выпускница магистратуры ФГС ГГУ,
специальность Армянский язык и литература
электронная почта: tem.batikyan@bk.ru

«Эпос – это великая сокровищница жизни и духовной силы армянского народа и неоспоримое доказательство его величия перед миром»
Ованес Туманян

Национальный эпос «Сасна Церер» занимает особое место в армянской действительности и культуре. Он возник в одном из отдаленных уголков Армянского нагорья, в Сасуне, который был десятым гаваром Агдзниской провинции Великой Армении. «Сасна Церер» - произведение высокого искусства.

В эпосе четыре поколения героев эпоса, связанных между собой родственными узами - Санасар и Багдасар, Великий Мгер, Давид Сасунский и Малый Мгер. Эпос является настоящей энциклопедией изни армянского народа, его быта, семейных традиций, верований, строительной и восстановительной деятельности. В героическом эпосе раскрываются такие качества армянского народа, как строить и творить. Тема строительства и восстановления занимает важное место в эпосе «Сасна Црер». В разных сказах эта тема имеет как общие черты, так и различия. В сасунских сказах строительная тема является одной из главных в первой, второй и отчасти в четвёртой ветвях. В шести вариантах сасунских сказах строительство крепости Сасна связано с именем Санасара. Санасар и Багдасар становятся основателями Дома Сасна. Тема строительства церкви в сасунских сказах лишь в одном случае связана с именем Мгера. А в других типологических группах преданий имя Мгера связано со строительством монастыря Марута, основанием охотничьих угодий на Цовасаре. В сасунских сказах эпизоды, связанные со строительством, приписываются Давиду, который строит деревни, города, стойла, здания, стены.

Когда речь идёт о Малом Мгере, важно помнить, что у него противоречивый характер: в одном случае он — строитель, в другом — разрушитель. Он разрушает, потому что не принимает уже существующий мировой порядок.

Ключевые слова: *эпос, литература, сказ, литературное развитие, жанр, строить, восстановить, мотив, типология, «Сасна Црер » сказитель, сводный текст.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 18.12.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 28.12.2024թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: